




Աշխատանքի նպատակն է, պարզ գիտելիքների միջոցով, օգնել ժողովրդին, հաղթահարելու մարդկային բացասական զգացմունքների անկառավարելի բխումները, որոնք ծագում են օձերին հանդիպելիս: Ինչպես նաև հանրամատչելի դարձնել օձերով կծված մարդկանց և ընտանի կենդանիներին առաջին բուժական օգնության ճիշտ միջոցները: Դրա համար, նպատակահարմար է հանրամատչելի պատասխենել հետևյալ հիմնական հարցերին:

- ❑ “Ի՞նչ անել, որպեսզի օձը չկծի”
- ❑ “Ինչպես՞ որոշել, թունավոր օձ է՞ թե ոչ”
- ❑ “Ի՞նչ անել եթե կծել է”

Նշված հարցերը սովորաբար ծագում են մեր մոտ, անգամ օձերի մասին ուղղակի մտածելիս, իսկ օձին հանդիպելիս սովորաբար ունենում են հետևյալ հերթականությունը (Նկ. 1).



Այս հարցերի լուծումը թույլ կտա մարդկանց, պարզ գիտելիքների ձեռք բերման միջոցով ազատվել ավելորդ հուզմունքներից: Վերջինս իր հերթին կնպաստի մարդկային վերաբերմունքի բարելավմանը, շատ օգտակար, ոչ այնքան վտանգավոր և չափազանց հետաքրքիր կենդանիների՝ օձերի, նկատմամբ: Այս դարավոր պատմություն ունեցող միջոցառման կոնֆլիկտի լուծումը անհրաժեշտ է հանդիսանալու է հերթական և անհրաժեշտ քայլ մարդկային հանրության կայուն զարգացման ընթացքում:

### ԻՆՉ ԱՆԵԼ, ՈՐՊԵՍՉԻ ՕՉԸ ՉԿԾԻ

Ինչպես ցույց է տալիս փորձը, օձերի և մարդկանց, կամ որևէ այլ խոշոր կենդանիների հետ կոնֆլիկտները ծագում են 2 հիմնական պատճառներով:

- 1) Մանր օձերի մոտ ազդեցիկ առաջանում է որպես պաշտպանիչ ռեակցիա [1-17], որը հիմնավորված է վախի զգացումով:
- 2) Հիմնականում խոշոր (մարդուց կամ ընտանի կենդանուց մեծ) չափսեր ունեցող օձերի մոտ ազդեցիկ կարող է լինել որսորդական վարքի արտահայտումը: Շատ հազվադեպ վերջին տարբերակը արտահայտվում է մանր օձերի մոտ, այն էլ միայն այն դեպքերում երբ խոշոր կենդանուց գալիս է օձի սովորական զոհի (կրծողի, մողեսի, և այլն, կամ նրանց արյան) հոտը, իսկ օձը, առաջնորդվելով հոտառությամբ, չի հասցնում գնահատել զոհի ռեալ չափսերը:

Հնարավոր է ընկալել օձերի ազդեցիկ արտահայտման տարբեր աստիճաններ:

- 1) **Չգուշացնող բնույթի վարք**
  - ◆ Ֆշշոց կամ Ազդեցիկ Շնչառական Արտահայտում
  - ◆ Վախեցնող Հարձակողական Շարժումներ կամ Յուրահատուկ Վախեցնող Վարք
- 2) **Ակտիվ պաշտպանում**
  - ◆ Հարձակում, որը գուգորդվում է կծելով:
- 3) **Ոստրդական վարք**
  - ◆ ևս Հարձակում, որը գուգորդվում է կծելով:

Օձերի ազդեցիկ նշված արտահայտումների պատճառականությունը, արտահայտումները և դրանցից խուսափման եղանակները համառոտ ներկայացված են աղյուսակ 1-ի տեսքով: Ուշադիր զննելով աղյուսակը օգտվողը կարող է ստանալ իր հիմնական և անհրաժեշտ հարցերի պատասխանները:

Բնակավայրերում օձերի քանակը քչացնելու համար նպատակահարմար է պահպանել մաքրություն, որպեսզի, խոչընդոտել, օձերի կեր հանդիսացող, կրծողների տարածմանը:

**Աղյուսակ 1**

Պատճառները	Արտահայտումը	Խուսափոյու միջոցները
<p>Օձը վախեցել է</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հանդիպած մեծ օբյեկտի (մարդու, կամ որևէ կենդանու) շարժումներից</li> <li>2. Հողի մակերեսի տատանումներից</li> <li>3. Օբյեկտի աջքերի կամ բերանի լորձաթաղանթի փայլից.</li> <li>4. Շրջապատի ջերմաստիճանի կտրուկ բարձրացումից</li> <li>5. Դիպչումից</li> </ol>	<p>ԱՐԱԳ ՍՈՂՈՒՄ անկախ ուղղությունից</p> <hr/> <p>ՖՇՇՈՅ</p> <hr/> <p>ՎԱԽԵՅՆՈՂ ՀԱՐՉԱԿՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ</p> <hr/> <p>ՀԱՐՉԱԿՈՒՄ</p>	<p>Ընկալելով ցանկացած քար, ճեղք, մացառուտ կամ աղբի կույտ, որպես հնարավոր օձի թաքստոց, ամենուրեք լինել ծայրահեղ ուշադիր նման առարկաների հետ կամ դրանց մոտագայքում աշխատելիս կամ հանգստանալիս:</p> <p>Աշխատել նկատել օձերին ավելի շուտ քան նրանք նկատեն ձեզ:</p> <p>Գիշերները քայլելիս լուսավորել ճանապարհը</p> <p>Օձ նկատելիս, սպասել մինչև հեռանա, կամ աշխատել շրջանցել նրան:</p> <p>Անել ամեն ինչ որպեսզի հանկարցակի չմոտենալ օձին ավելի քան 200 սմ, և չդիպչել նրան:</p> <p>Հատուկ՝ օձերի հետ աշխատող անձանց համար</p> <p>Օձերի հետ հանդիպում ակնկալելիս լավ լվանալ ձեռքերը օճարով և հագնել մաքուր հագուստ առանց արյան կամ կենդանիների կղանքի որևէ հետքերի:</p> <p>Օձին վանդակից հանելիս օգտվել միայն գործիքներով</p> <p>Չմոտեցնել օձերին դեմքին</p>
<p>Օձը զգացել է</p> <p>Մոտիկ (0-150 սմ) հեռավորության վրա, իր սովորական զոհի բնորոշ հոտը կամ/և որսի ժամանակ, հանկարծակի հայտնված շարժվող առարկա</p>		

**“ԻՆՉՊԻՄԻ՞ ՕՉ Է, ԹՈՒՆԱՎՈՐ Է ԹԵ՞ ՈՉ”**

Այս հարցի պատասխանը կարող է կարևոր լինել ինչպես օձի կծածից տուժվածներին ճիշտ բուժական օգնություն ցուցաբերելու, այնպես էլ, ուղղակի, անձնական հետքորթությունը բավարարելու համար:

Հայաստանում տարածված 23 տեսակի ու ենթատեսակի օձերից (*Reptilia, Serpentes*) և 2 տեսակի, օձերին արտաքինապես նման, անոտք մողեսներից (*Reptilia, Lacertilia, Anguidae*) [1,2,4,8], թունավոր են միայն 9 տեսակի օձերը (39,1%), որոնք պատկանում են 2 ընտանիքի՝ լորտուանմանների (*Colubridae*) և իժանմանների (*Viperidae*) [1,2,4,8,10]: Թունավոր մողես Հայաստանում չկա [1,2,4,8,10]:

Լորտուանմանների ընտանիքը ունի բարդ կարգաբանական կազմ և ապագայում հնարավոր է ճեղքվի մի քանի ընտանիքների: Այս ընտանիքի մեծ մասը կազմում են ոչ թունավոր օձերը, օրինակ հայաստանում լորտուանմանները ներկայացված են 14 ոչ թունավոր տեսակներով և ընդամենը 4 թունավոր տեսակներով (աղյուսակ 2), որոնք նախնական տվյալներով վերաբերվում են 3 ենթաընտանիքների (*Boiginae, Psammophiinae, Colubrinae*) [16,19,20]: Հայաստանի թունավոր լորտուանմանների կծածները վտանգավոր չեն մարդու կյանքի համար, դրանց թույների ազդեցությունից ուղղակի կարող են առաջանալ տեղային ցավ և այտուց [1,2,4,8-10]: Ի տարբերություն լորտուանմանների իժանմանները ընտանիքը ավելի միատարր է, և ներկայացված է միայն թունավոր օձերով, որոնցից շատերը վտանգավոր են մարդու և ընտանի կենդանիների համար [2,4,8]: Հայաստանում այս ընտանիքը ներկայացված է իսկական իժերի (*Viperinae*) ենթաընտանիքի 4 տեսակներով [1,2,4,8] (աղյուսակ 2).

Օձերի բոլոր տեսակների համար յուրահատուկ բնագավայրեր կարող են հանդիսանալ հարմար թաքստոցներով հարուստ համեմատաբար բաց, լավ տաքացվող և լուսավորվող տարածքները [2,4,8,11]: Օձի թաքստոց կարող են ծառայել ցանկացած ստվեր ստեղծող ու

Աղյուսակ 2

Աղյուսակ 2Տեսակները	
Հայերեն	Լատիններեն
Դագադային իժ (գյուրգա, յաթաղան)	Macrovipera lebetina obtusa Dwigubsky
Ռադդեի լեռնային իժ (Հայկական իժ)	Vipera (Montivipera) raddei raddei Boettger
Երևանյան լեռնատափաստանային իժ	Vipera (Pelias) eriwanensis Reuss
Դարևսկու իժ	Vipera (Pelias) darevskii Vedmederja et all.
Կովկասյան կատված	Telescopus fallax iberus Eichwald
Մոդեսային օձ	Malpolon monspessulanus insignitus Geoffroy
Ռեվերջերի (բազմերանգ) սահուկ	Coluber (Zamenis) ravergieri Menetries
Կապարագույն սահուկ	Coluber (Zamenis) nummifer Reuss
Նայադային սահուկ	Coluber (Zamenis) najadum Eichwald

խոնավություն պահող առարկաներ՝ քարեր, շինանյութ, կառույցներ, աղբ, ընկած ծառերի բներ խիստ թփուտներ և այլն:

Անդրադառնալով օձերի և սողունների տեսակների որոշմանը պետք է նշել, որ դրա համար գոյություն ունի հատուկ կարգաբանական կոմպլեքս եղանակ [2,4,7,8,11, 16,19,20] որը օգտագործում են մասնագետները, սակայն այդ եղանակի կիրառման համար անհրաժեշտ է նախ և առաջ բռնել կենդանուն և այնուհետև կատարել մի շարք հատուկ չափումներ, իսկ առանձին դեպքերում նաև լաբորատոր հետազոտություններ: Այս բոլորը կարևոր է մասնագետի, կամ հետաքրքրվողի համար, բայց ավելորդ է այն մարդու համար որը, օձին հանդիպելիս կանգնում է միայն մեկ հարցի՝ “Ինչպե՞ս ազատվել վտանգից”: Այդ իսկ պատճառով այստեղ փորձ է արված ներկայացնել թունավոր օձերի տեսակների որոշման մի այնպիսի համակարգ, որը հարմար կլինի ժողովրդական օգտագործման համար: Թունավոր օձերի որոշման համակարգի (ԹՕՎՈՀ) առաջարկվող էկոլոգա-արտաքննարանական տարբերակը հանդիսանում է օձերի տեսակների ավանդույթային հանրամատչելի ներկայացման [6,7,11] կատարելագործված և հատկանիշներով հարստացված մի տեսակ:

ԹՕՎՈՀ ով նախատեսված է աշխարհագրական, էկոլոգիական և արտաքննարանական հատկանիշների համատեղ օգտագործումը, հետևյալ հարցերին հերթական պատասխանելու միջոցով:

1. **Որքա՞ն վտանգավոր օձ է հանդիպել՝ կամ, այլ կերպ ասած, իժանմա՞ն է, թե՞ լրոտումանման:**

Այս հարցի պատասխանը արագ ստացվում է հենյալ տեստի լրացումից (Աղյուսակ 3). Աղյուսակում տրված են իժանմանների գլխավոր առանձնահատկությունները և դրանց համարժեք բալլերը, բալլի արժեքը կախված է հատկանիշի կարևորությունից: Անգամ եթե օգտվողը չի տեսել օձին լրիվ, այլ տեսել է նրա մարմնի մի մասը, նա կարող է ստանալ օձի նախնական որոշումը, և անել համապատասխան հետևությունները:

Աղյուսակ 3

Իժանմանների հատկանիշները	Նիշը	Այո – Նիշ Ոչ – 0
Մարմինը համեմատաբար հաստ է	1	-
Մարմինը անփայլ է	2	-
Մեջքի նախշը մուգ շրթայածև	1	-
Թեփուկները արտահայտված երկայնակի կատարներով	2	-
Գլուխը խոշոր, եռանկյունաձև, տափակոտ	1	-
Աջքը լավ երևացող, բիբր ուղղահայած	2	-
Պոչը կարճ է, հաստ մարմնից հետո միանգամից բարակող	2	-
<b>Գումարը</b>	<b>11</b>	<b>-</b>

Եթե ստացված պատասխանը պարունակում է գոնե մեկ 2 բալլանոց հատկանիշ, ապա հաղիպած օձին պետք է պայմանական վերաբերել իժերին և լինել չափազանց զգույշ: Սակայն միայն լիարժեք գումարն է (11 բալլ), վկայում, որ հաղիպած օձը իրոք իժանման է, և հետևաբար՝ վտանգավոր:

Եթե հանդիպած օձը չի վերաբերվում իժանմաններին, ապա նրա թունավորության մասին այլ տվյալները ներկայացված են թունավոր լրոտումանմանների տեսակային ակնարկներում: Տեսակային

ակնարկներում ամփոփված հատկանիշների հանրությամբ չհամապատասխանող տեսակները վերավերվում են ոչ թունավոր օձերին:

2. Նախկան տեսակային ակնարկին անցնելը, հնարավոր է գոնե մոտավորապես գտնել հաղիպած օձին հայտնաբերելու վայրը հատուկ մշակված հայաստանի թունավոր օձերի տարածման քարտեզի (Նկ. 2) և մարզերով ու ուղղահայաց հոտիներով տարածման աղյուսակի (4), որոնք կազմված են երկարատև դաշտային հետազոտությունների և գրական տվյալների [1,2,4,8] հիման վրա: **Թունավոր օձերի ո՞ր տեսակներն են հանդիպում Հայաստանի այս վայրում** հարցի պատասխանը թույլ է տալիս խնայել ուժերն և ժամանակը, վերանայելով միայն այդ վայրի (մառզի, ուղղահայաց գոտու, կամ լեռան) համար հատուկ տեսակների ակնարկները:

Թունավոր օձերի տեսակների ամենամեծ բազմազանությունը բնորոշ է մեր այն մարզերին որոնք տեղադրված են հանրապետության հարավային՝ անլի չոր, մասում և տարածվում են նախալեռներից մինչև բարձր գագաթները (աղյուսակ 4; Նկ 2):

Աղյուսակ 4

Տեսակները	Տարածումը ըստ բարձրության	Մարզերը										
		Շ	Լ	Թ	Ամ	Ագ	Ե	Կ	Գ	Ար	Վ	Ս
<i>Macrovipera lebetina obtusa</i>	450-1400 (2000)	-	-	+	+	+	+	+	-	+	+	+
<i>Vipera (Montivipera) raddei raddei</i>	1400-2500	+	-	-	-	+	-	+	-	+	+	+
<i>Vipera (Pelias) eriwanensis</i>	(1000) 1700-3000	+	+	+	-	+	-	+	+	+	+	+
<i>Vipera (Pelias) darcvskii</i>	2600-3100	+	+	-	-	-	-	-	-	-	-	-
<i>Telescopus fallax iberus</i>	600-2000	+	-	+	+	+	+	+	-	+	+	+
<i>Malpolon monspessulanus unguis</i>	500-1400	-	-	-	+	+	+	+	-	+	-	+
<i>Coluber ravergieri</i>	700-2500	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
<i>Coluber nummifer</i>	600-1600	-	-	-	+	+	+	+	-	+	+	+
<i>Coluber najadum</i>	500-2100	+	-	+	+	+	+	+	-	+	+	+
Ընդհանուր քանակը		6	3	4	5	8	6	8	2	8	7	8

**Լեգենդ:** Շ-Շիրակ, Լ-Լոռի, Ս-տավուշ, Ամ-Արմավիր, Ագ-Արագածոտն, Ե-Երևան, Կ-Կոտայք, Գ-Գեղարքունիք, Ար-Արարատ, Վ-Վայոց ձոր, Ս-Սյունիք. Մգացման աստիճանը վկայում է տեսակի վտանգավորության մասին

Այսիսի մարզեր են **Արագածոտնը, Կոտայքը, Արարատը, Վայոց ձորը** և **Սյունիքը:** Նշված մարզերում տարածված են Հայաստանի ամենա վտանգավոր 2 տեսակի օձերը՝ բավականին հաստ ու խոշոր Գագաղային իժը (Գյուրգան) (ակնարկ 1.1.; նկ.3) բնակեցնում է չոր ստորոտների կամ նախալեռնային գոտու քարքրոտ վայրերը, իսկ ավելի մանր Ռ-աղդեի իժը (ակնարկ 1.2.; նկ 4)՝ բարձր լեռնային, գիհու, կաղնու, տանձի նշենու և այլ տիպերի նոսրանտառային կամ թփուտային բուսականությամբ ծածկված ժայռերը: Հիմնականում այս տեսակների հետ մեկ տեղ հանդիպում են թունավոր լորտուանմանները՝ մողեսային օձը (ակնարկ 2.2.1; նկ.8 ) և կապարագույն սահուկը (ակնարկ 2.3.3.; նկ.11) միայն նախալեռներում, իսկ կատվաօձը (ակնարկ 2.1.1.; նկ.7), Ռ-եվերգերի (ակնարկ 2.3.2.; նկ10) և նայադային (ակնարկ 2.3.1.; նկ.9) սահուկները՝ գրեթե ամենուրեք: Սակայն այս տեսակները, ինչպես արդեն նշվեց մարդու համար վտանգավոր չեն: Ավելի բարձր՝ քարքրոտ լեռնային տափաստաններում, դաշտերի և առոտավայրերի գոտում հանդիպում է մանր, բայց հաստոտ Երևանյան լեռնատափաստանային իժը (ակնարկ 1.3.; նկ 5), որի կծածը ևս մահաժու չէ [1,2, 4,8, 9,10]:

Այն մարզերում, որոնք տարածված են միայն նախալեռներնային գոտում (Արմավիր, Երևան) կամ ընդհակառակը միայն բարձրադիր գոտում (Գեղարքունիք, Լոռի), թունավոր օձերի կազմը բավականին աղքատ է:

**Արմավիրում և Երևանում** իժանմաններից տարածված է միայն դագաղային իժը (ակնարկ 1.1.), իսկ լորտուանմանները ներկայացված են լիրիվ կազմով (ակնարկներ 2.1.1., 2.2.1.,2.3.1 – 2.3.3.):


**Գեղարքունիքում** իժանմաններից հանդիպում է միայն Երևանյան լեռնատափաստանային իժը (ակնարկ 1.3.) իսկ լորտուանմաններից միայն բազմերանգ սահուկը (ակնարկ 2.3.2.):

**Լոռու, Տավուշի և Սյունիքի** խոնավ ու մութ անտառածածկ տարածքները գրեթե բացարձակապես զուրկ են թունավոր օձերից: Շատ հազվագյուտ ցածրադիր համեմատաբար չոր անտառում կարող են հանդիպել դագաղային իժը (ակնարկ 1.1.) , բազմերանգ սահուկը (ակնարկ 2.3.2.), նայադային սահուկը (ակնարկ 2.3.1.) կամ կատվաօձը (ակնարկ 2.1.1.), իսկ անտառային գոտու վերին սահմանի մոտ լուսավոր բարձր լեռնային մարգագետիններից կամ լեռնատափաստանից թափանցած երևանյան լեռնատափաստանային իժը (ակնարկ 1.3): Սյունիքի

լեռնային անտառներում հնարավոր է հանդիպել Ռ-ադրեի իժին (ակնարկ 1.2.) և նայադային սահուկին (ակնարկ 2.3.1.):

**Հյուսիսային Շիրակի** և **Հյուսիս-Արևմտյան Լոռու** բարձր լեռնային (Ջավախքի լեռնաշղթա) քարքրոտ մարգագետնա-տափաստաններում և մարգագետիններում հանդիպում են իրարմ բավականին մնան մանր Երևանյան լեռնատափաստանային իժը (ակնարկ 1.3.) և Գարևակու իժը (ակնարկ 1.4).

**Նկար 2. Հայաստանի թունավոր օձերի տեսակային խմբերի տարածման քարտեզը**



**Լեգենդ`**

- 12 Հնարավոր է *Vipera raddei*, *Coluber ravergieri*, *Coluber najadum*
- 11 Հնարավոր է *Vipera eriwanensis*, *Coluber ravergieri*
- 10 Հնարավոր է *Macrovipera lebetina obtusa*, *Telescopus fallax iberus*, *Coluber ravergieri*, *Coluber najadum*
- 9 *Vipera darevskii*
- 8 *Vipera eriwanensis*, *Vipera darevskii*
- 7 *Vipera eriwanensis*, *Coluber ravergieri*
- 6 *Vipera raddei*, *Vipera eriwanensis*, *Telescopus fallax iberus*, *Coluber najadum*, *Coluber ravergieri*
- 5 *Vipera raddei*, *Telescopus fallax iberus*, *Coluber najadum*, *Coluber ravergieri*
- 4 *Macrovipera lebetina*, *Vipera raddei*, *Malpolon monspessulanus*, *Telescopus fallax iberus*, *Coluber najadum*, *Coluber nummifer*, *Coluber ravergieri*
- 3a *Macrovipera lebetina*, *Telescopus fallax iberus*, *C. najadum*, *Coluber ravergieri*
- 3 *Macrovipera lebetina*, *Malpolon monspessulanus*, *Telescopus fallax iberus*, *Coluber najadum*, *Coluber nummifer*, *Coluber ravergieri*
- 2 *Macrovipera lebetina*, *Malpolon monspessulanus*, *Telescopus fallax iberus*, *Coluber najadum*, *Coluber nummifer*
- 1 *Macrovipera lebetina*, *Malpolon monspessulanus*, *Coluber najadum*

### **Տեսակային ակնարկներ**

Քանի որ, օձին հանդիպելիս հնարավոր է տեսնել նրան անբողոքյամբ կամ մասնակի, մշակված տեսակային ակնարկը թույլ է տալիս մեծ հավանականությամբ որոշելու տեսակը անկախ տեսած հատվածից:

1. **Իժանմաններ (Viperidae, Viperinae)**

1.1. **Դահաղային իժ (Գյուրգա, Յաթաղան) *Macrovipera lebetina obtusa*.**



**Նկար 3**

**Երկարությունը:** 22–200 սմ: **Մարմինը** համեմատաբար հաստ է, անփայլ. **Թեփուկները** արտահայտված երկայնակի կատարներով. **Մեջքային մակերեսը** մոխրագույն, գորշ-մոխրագույն, մաշկափոխությունից առաջ՝ մուգ շագանակագույն, համարյա սև: **Մեջքային նախշը** թույլ արտահայտված մուգ (գորշ, մոխրագույն, շեկ) շղթայաձև լայնե, որոշ դեպքերում կարող է բացակայել: **Գլուխը** խոշոր է, տափակ ու եռանկյունաձև գրեթե առանց նախշի, ծածկված է մանր թեփուկներով: **Աջքը** երևացող, բաց գույնի ծիածանաթաղանթով, բիբը ուղղահայաց: **Պոչը** բավականին կարճ է (3-23սմ) միանգամից նեղացող, գուրկ է յուրահատուկ նախշից, ծայրը հաճախակի դեղնավուն. Բավականին երկար գույգ թույնարտազատիչ ատամները իրենց փոխարինիչներով տեղադրված են վերին ծնոտի առջևի մասում, կծածը վտանգավոր է մարդու և ընտանի կենդանիների կյանքի համար:

1.2 **Ռադդեի իժ (Հայկական իժ) *Vipera (Montivipera) raddei raddei*.**



**Նկար 4**

**Երկարությունը:** 18–109 սմ: **Մարմինը** համեմատաբար հաստ է, անփայլ: **Թեփուկները** արտահայտված երկայնակի կատարներով. **Մեջքային մակերեսը** մոխրագույն, գորշ-մոխրագույն, սև մաշկափոխությունից առաջ՝ մուգ շագանակագույն կամ սև: **Մեջքային նախշը** շղթայաձև, թույլ կամ վառ արտահայտված դեղնա-կարմրավուն, շեկ, խալերը քիչ թե շատ իրար կպած, արտահայտված մուգ սահմանագծով: **Գլուխը** խոշոր է, տափակ ու եռանկյունաձև ծածկված է մանր թեփուկներով, նախշը գլխի հետևի մասում տեղադրված երկու գույգ մուգ խալերի տեսքով, լավ են արտահայտված



հետաչյա և ստորաչյա մուգ գծերը: **Աջքը** երևացող, մուգ գույնի ծիածանաթաղանթով, բիբը ուղղահայաց: **Պոչը** բավականին կարճ է (1-9սմ) միանգամից նեղացող: Պոչի նախշը անցնում է երկայնակի զուլավոր տեսքի, ծայրը հաճախակի դեղնավուն, կամ դեղնակարմրավուն: Բավականին երկար գույզ թույնարտազատիչ ատամները իրենց փոխարինիչներով տեղադրված են վերին ծնոտի առջևի մասում, կծածը վտանգավոր է մարդու և ընտանի կենդանիների կյանքի համար:

### 1.3 Երևանյան լեռնատափաստանային իժ *Vipera (Pelias) eriwanensis*



Նկար 5

**Երկարությունը** 16 – 52 սմ: **Մարմինը** համեմատաբար հաստ է, անփայլ: **Թեփուկները** արտահայտված երկայնակի ակոսներով: **Սեջքային մակերեսը** մոխրագույն, գորշ-մոխրագույն, մաշկափոխությունից առաջ՝ մուգ գորշ կամ շագանակագույն: **Սեջքային նախշը** շղթայաձև, նեղ, թույլ թե վառ արտահայտված մուգ մոխրագույն, կամ մուգ գորշ, համարյա սև: Խալերը իրար կպած միջնային հպումներով: **Գլուխը** խոշոր է, տափակ եռանկյունաձև կամ թեթևակի երկարավուն, ծածկված է մանր վահանիկներով: Նախշը գլխի հետևի մասում տեղադրված գույզ մուգ երկարացված խալերի տեսքով, մեզ խալ ճակատային վահանիկին, լավ է արտահայտված հետաչյա մուգ գիծը: **Աջքը** երևացող, մուգ գույնի ծիածանաթաղանթով, բիբը ուղղահայաց: **Պոչը** բավականին կարճ է (1-8սմ) միանգամից նեղացող: Պոչի նախշը արտահայտված շղթայաձև, ծայրը հաճախակի դեղնավուն: Բավականին երկար գույզ թույնարտազատիչ ատամները իրենց փոխարինիչներով տեղադրված են վերին ծնոտի առջևի մասում, կծածը մահաժքեր չէ մարդու կյանքի համար:

### 1.4 Դարևակու իժ *Vipera (Pelias) darevskii*



Նկար 6

**Երկարությունը** 16–52 սմ: **Մարմինը** համեմատաբար հաստ է, անփայլ: **Թեփուկները** արտահայտված երկայնակի կոտարներով: **Սեջքային մակերեսը** մուգ մոխրագույն, մուգ գորշ-մոխրագույն, համարյա սև, հատկապես մաշկափոխությունից առաջ: Սեջքային նախշը շղթայաձև, լայն, թույլ թե վառ արտահայտված սև, կամ մուգ գորշ: Խալերը իրար կպած լայնակի հպումներով: **Գլուխը** խոշոր է, տափակ եռանկյունաձև, ծածկված է մանր վահանիկներով: Նախշը գլխի հետևի մասում տեղադրված գույզ մուգ երկարացված խալերի տեսքով, մեզ խալ ճակատային վահանիկին, լավ է արտահայտված հետաչյա մուգ գիծը: **Աջքը** երևացող, մուգ գույնի ծիածանաթաղանթով, բիբը ուղղահայաց: **Պոչը** բավականին կարճ է (1-8սմ) միանգամից նեղացող: Պոչի նախշը արտահայտված շղթայաձև, ծայրը



հաճախակի դեղնավուն: Բավականին երկար գույգ թույնարտազատիչ ատամները իրենց փոխարինիչներով տեղադրված են վերին ծնոտի առջևի մասում, թույնի ազդեցությունը մարդու վրա ուսումնասիրված չէ, կծածը կարող է վտանգավոր լինել մարդու և ընտանի կենդանիների կյանքի համար:

2. Լորտուանմաններ (*Colubridae*)

2.1. *Boiginae*

2.1.1. Կովկասյան կատված *Telescopus fallax iberus*.



Նկար 7

**Երկարությունը** 19–100սմ: **Մարմինը** համեմատաբար բարակ է, փայլուն: **Թեփուկները** հարթ, կամ թեթևակի ներս ընկած: **Սեջքային մակերեսը** մոխրագույն, սպիտակավուն, գորշ-մոխրագույն, երբեմն վարդագույն երանգով մաշկափոխությունից առաջ՝ գորշ շագանակագույն: Նախշը շղթայաձև, մուգ (գորշ, շագանակագույն, շեկ, կամ համարյա սև), հաճախալի առանձնացված խալերով: Առաջին խալը ծածկում է վիզը և գլխի հիմքը: **Գլուխը** եռանկյունաձև է, ծածկված խոշոր վահանիկներով, գլխի միջին գծով մինչև ժակատային վահանիկը տարածքում է բարակ մուգ գիծ: **Աջքը** արտահայտված, բաց ոսկեգույն կամ վարդագույն երանգի ծիածանաթաղանթով, բիբը ուղղահայաց: **Պոչը** երկար է (4-20սմ) աննկատ նեղացող: Ծայրը երբեք չի լինում դեղնավուն: Կարճ 2-3 գույգ թույնարտազատիչ ատամները տեղադրված են վերին ծնոտի հետևի մասում բերանի խորքում, կծածը մարդու և ընտանի կենդանիների կյանքի համար վտանգավոր չէ:

2.2. *Psammophiinae*

2.2.1. Մողեսային օձ *Malpolon monspessulanus insignitus*



Նկար 8

**Երկարությունը** 23 – 170 սմ: **Մարմինը** համեմատաբար բարակ է, անփայլ: **Թեփուկները** հարթ, կամ ներս ընկած: **Սեջքային մակերեսը** գորշ-մոխրագույն, մաշկափոխությունից առաջ՝ գորշ շագանակագույն: Երիտասարդ օձերի մոտ մեջքը խիտ գոլավոր: սպիտակ ու սև գույների խճանկարն ստեղծում է խայտաբղետ շղթայաձև նախշ, առանձնացված կլորավուն խալերից: Տարիքի հետ նախշը թուլանում է, մեջքի մակերեսը դառնում է գորշ աննախշ, կամ թույլ արտահայտված մանր կետիկներով: **Գլուխը** երկարաբուն է երկայնակի ներս ընկած ճակատային հատվածով, արտահայտված բարդ նախով, ծածկված է խոշոր վահանիկներով: **Աջքը** խոշոր, բաց գույնի

ծիածանաթաղանթով, բիբը կլոր: **Պռչը** երկար է (5-30սմ) աննկատ նեղացող, երիտասարտների մոտ երկայնակի գոլավոր, մեծերի մոտ աննախշ: Ծայրը երբեք չի լինում դեղնավուն: Կարճ գույգ թույնարտազատիչ ատամները տեղադրված են վերին ծնոտի հետևի մասում: Բերանի խորքում, կծածը մարդու և ընտանի կենդանիների կյանքի համար վտանգավոր չէ: տևի մասում բերանի խորքում, կծածը մարդու և ընտանի կենդանիների կյանքի համար վտանգավոր չէ:

### 2.3. Colubrinae

#### 2.3.1. Նայադային սահուկ *Coluber (Platiceps) najadum dahli*



Նկար 9

**Երկարությունը** 25 – 120 սմ: **Մարմինը** համեմատաբար բարակ է, թույլ փայլուն: **Թեփուկները** հարթ. **Մեջքային մակերեսը** մոխրագույն, գորշ-մոխրագույն, մաշկափոխությունից առաջ՝ գորշ-շագանակագույն: Նախշը մարմնի առջևի մասում կողմնային սպիտակ եզրերով մուգ խալերի տեսքով, մեծջքային մակերեսը գրեթե առանց նախի, կամ մանր կետիկների երկայնակի գուգահեռ շախբերով: **Գլուխը** բարակ երկարավուն, թույլ արտահայտված նախշով, աջքերը ընգծված են սպիտակ գծով, ծածկույթը խոշոր վահանիկային: **Աջքը** խոշոր, կարմրավուն ծիածանաթաղանթով, բիբը կլոր: **Պռչը** երկար է (9-30սմ) աննկատ նեղացող, առանց նախշի: Ծայրը երբեք չի լինում դեղնավուն: Չուրկ է թույնարտազատիչ ատամներից, կծածը մարդու և ընտանի կենդանիների կյանքի համար վտանգավոր չէ:

#### 2.3.2. Ռևերջերի սահուկ (Բազմերանգ սահուկ) *Coluber (Haemorrhois) ravageri*



Նկար 10

**Երկարությունը** 23 – 140 սմ: **Մարմինը** չափավոր հաստ է, թույլ փայլուն կամ գրեթե անփայլ: **Թեփուկները** թույլ արտահայտված երկայնակի ուռուցիկությամբ. **Մեջքային մակերեսը** մոխրագույն, գորշ-մոխրագույն, մաշկափոխությունից առաջ՝ գորշ շագանակագույն: Մեջքային նախշը վառ արտահայտված մուգ (գորշ, շագանակագույն, համարյա սև) շրթյաձև նախշով, որի խալերը ընդգծված են սպիտակավուն սահմանագծով: **Գլուխը երկարաբուն է, ջղայնացած ժամանակ** ավելի խոշոր, տափակ ու եռանկյունաձև արտահայտված բարդ նախով, ծածկված է խոշոր վահանիկներով: **Աջքը** երևացող, բաց գույնի ծիածանաթաղանթով, բիբը կլոր: **Պռչը** երկար է (5-30սմ) աննկատ նեղացող, միշտ երկայնակի գոլավոր: Ծայրը երբեք չի լինում դեղնավուն: Չուրկ է թույնարտազատիչ ատամներից, կծածը մարդու և ընտանի կենդանիների կյանքի համար վտանգավոր չէ:

#### 2.3.3. Կապարագուն սահուկ *Coluber (Haemorrhois) nummifer*

**Երկարությունը** 23–140 սմ: **Մարմինը** համեմատաբար հաստ է, թույլ փայլուն կամ գրեթե անփայլ: **Թեփուկները** թույլ արտահայտված երկայնակի ակոսներով. **Մեջքային մակերեսը** մոխրագույն, գորշ-

մոխրագույն, մաշկափոխությունից առաջ՝ գորշ շագանակագույն: Մեջքային մակերեսին թույլ արտահայտված մուգ (գորշ, մոխրագույն, սև) շղթայաձև լայն նախշ է, որը որոշ դեպքերում կարող է բացակայել: **Գլուխը** խոշոր է, տափակ ու եռանկյունաձև թույլ արտահայտված նախշով, ծածկված է խոշոր վահանիկներով: **Աջքը** երևացող, բաց գույնի ծիածանաթաղանթով, բիբը կլոր: **Պոչը** երկար է (5-30սմ) աննկատ նեղացող, միշտ երկայնակի գոլաբոր: Ծայրը երբեք չի լինում դեղնավուն: Չուրկ է թույնարտազատիչ ատամներից, կծածը մարդու և ընտանի կենդանիների կյանքի համար վտանգավոր չէ:



Նկար 11

**Ըստ օձի կծածի հետքի** օձի տեսակային խումբի, կամ տեսակի, որոշումը հնարավոր է կատարել առաջնորդվելով հետևյալ յուրահատկություններով:


**Իժանմանները**

1. Կծեուց ներարկում են մարմնի մեջ նախ և առաջ ներքևի ծնոտի մանր ատամները, այնուհետև վերևի ծնոտի խոշոր գույգ թույնարտազատիչ ատամները [10]:
2. Հաճախակի մարմնի մեջ թափանցում է թույնարտազատիչ ատամներից մեկը:
3. Իժանմանների կծածն ու թույնարտազատումը տեղի է ունենում կայծակային արագությամբ՝ օձը բռնում է գոհին ներարկելով թույնը և առագ բաց է թողնում [10]:
4. Իժերի կծածիծ մնում է մեկ, կամ երկու կետային վերքեր, հաճախակի արյան արտազատուկներով, հնարավոր են պարոզված վերքեր (նկար 12 ա1 – ա3):

**Լորտուանմանները**

5. Թույնարտազատության և թույնի ներարկման համար բավականին երկարատև կատարում են ծամիչ շարժումներ [10]:
6. Ծամելու ընթացքում մարմնի մեջ թափանցում են օձի բերամի համարյա բոլոր ատամները:
7. Լորտուանմանների կծաից, անկախ իրենց թունավոր կամ ոչ թունավոր լինելուց, մնում են բազմակի կետային կամ պատրված ատամային հետքեր, (նկար 12 բ1, բ2):

Նկար 12. Իժանմանների և լորտուանմանների կծածների հետքերը



իժանմանների կծածի հետքեր ա1- դասական, ա2- պատռված, ա3- մեկ ատամով  
 Լորտուանմանների կծածի հետքեր բ1-դասական, բ2- պատռված

Որոշելով կծած օձի ընտանիքը հնարավոր է մեծ հավանականությամբ որոշել կծած օձի տեսակը քարթեզի օգնությամբ: Օձի կարգաբանական պատկանելիության ու թունավորության աստիճանի որոշումը անհրաժեշտ են տուժվածին առաջին օգնության և հիմնական բուժման ճիշտ ընթացք տալու համար:

**ԻՆՉ ԱՆԵԼ ԵԹԵ ԿԾԵԼ Է**

Օձի թույնը բարդ քիմիական կազմ ունեցող, հիմնականում սպիտակուցային տարրերից բաղկացած նյութ է: Հայաստանում տարածված իժամանանների թույները ունեն գերակշռող պրոթեոլիտիկ, կամ այլ կերպ ասած սպիտակուց քայքայիչ ազդեցություն, այսինքն խանգառում են արյան և արյունատար համակարգի, և շարակցական հյուսվածքի կառուցվածքն ու ֆունկցիաները:

Հայաստանի թունավոր օձերի թույների կազմն ու ազդեցությունը առայժմ, շատ թույլ են ուսումնասիրված:

Սեր իժամանանների բոլոր տեսակների թույները պարունակելով սերրինային և մետաղային պրոթեազներ սկզբից առաջացնում են արյան մակարդեղիության բարձրացում, որը այնուհետև փոխարինվում է երկարատես մակարդեղիության անկմամբ [10]: Ներյոտոքսիկ էֆֆեկտներ ապահովվող Ֆոսֆոլիպազային ազդեցության ֆերմենտները հայտնի են Ռ-ադդեի իժի օձերի խմբում (Vipera (Montivipera) raddei) [3, 10, 12-15].

Իժամանանների կծածից առաջացող վտանգավոր շոկային իրավիճակները ծագում են մի շարք պատճառներով, որոնց ցանկը արտահայտման ժամկետներն ու վերացման եղանակները հակիրճ ամփոփված են աղյուսակ 5 ում:

Լորտուանմանների թույները դեռ ավելի թույլ են ուսումնասիրվել քան իժամանաններինը: Հայտնի է որ լորտուանմանների թույները պարունակում են ինչպես գլիկոպրոտեիդային ծագման արյուն մակարդիչ տարրեր, այնպես էլ ներյոտոքսիկ մզվածքներ [10], հետևաբար նրանց դեցությունը

**Աղյուսակ 5**

**Իժամանանների կծածից առաջացող վտանգավոր շոկային իրավիճակները**

<b>Շոկային իրավիճակի պատճառները</b>	<b>Քանի՞ ժամից է արտահայտվում</b>	<b>Վերացման միջոցները</b>
Պանիկական վախ	առաջին րոպեներից	Հոգեբանական հանգստացում
Ալլերգիկ ռեակցիաներ	առաջին րոպեներից	Հակաալլերգիկ միջոցների ընդունում բառ հրահանգի
Տրոմբոէմբոլիաների առաջացում	առաջին րոպեներից	Հեպարինաթերապիա
Այտուցի տարածում	առաջին 48 ժամը	Հեպարինաթերապիա և հեղուկաբուժում
Ներքին արյունահոսություններ	1-2	Վիկասոլ, Ալբումին, ֆիբրինոգեն, (բայց ոչ կալցիումային դեղանյութեր) և հեղուկաբուժություն
Սրտային անբավարարություն	առաջին րոպեներից	Կորոդիամին, կոֆեին,
Երակային վերադարձի անկում	2	Հեպարինաթերապիա և հեղուկաբուժում
Հեմոլիզ	1	Հեղուկաբուժում և արյան փոխներարկում
Հեմոլիտիկ հիպոքսիա	4-5	Հեղուկաբուժում և արյան փոխներարկում, թթվածնային թերապիա.
ԿՆՀ ֆունկցիաների խանգառում	8	Նովոկային հիդրակորտիզոնային
Էլեկտրոլիթային անհավասարակշռություն	8 – 24	Հով պայաններ, հեղուկաբուժություն, հիդրոկորտիզոն.
Պերիֆերիկ դիմադրության փոփոխություններ	8 – 24	Նովոկային հիդրակորտիզոնային

կարող է լինել նման իժերի թույների ազդեցությանը: Փաստացի Հայաստանում տարածված լորտուանմանների կծածներից առաջացել ախտանիշները հետևյալն են՝

1. Ցավոտ ու տարածվող կայուն հեմորրագիկ այտուց
2. Կատվածի և մողեսային օձի թծածներից թույնավորվելու դեպքում նաև Տեղային հիպոտենզիա (անզգայացում).

Ելնելով Հայաստանում տարածված թունավոր օձերի թույների ազդեցության պարզեցման, ամփոփված է տուժվածներին առաջին բուժական օգնության հետևյալ սխեման [10, 12-14, 16,17]:

1. Մեկուսացնել օձին համոզվելով, որ նա մենակ է:

գտնել տուժվածի մարմնի բրայի բոլոր կծված տեղերը, առաջնորդվելով, այսուցուսով  
զուգեղիպվող թարմ վերքիկներով:

2. Աշխատել ճարել հակաալերգիկ դեղամիջոցներ (Գինեդրոլ, Սուպրաստին, Տավեգիլ և այլն) և արագ տալ տուժվածին մեկ դրոգա:
3. 2-7 բուսայնյա ընթացքում դուրս ծծել արյունը վերքիկներից, ինչի համար կարելի է օգտվել դատարկ մեծ (5-20ml) ստերիլ ներարկիչով հալելով անցքը վերքիկներին, կամ բերանով, եթե այնտեղ չկան վերքեր կամ ծակված ատամներ:
4. Հնարավորության սահմաններում անշարժեցնել կծված մարմնի հատվածը, այնպիսի դիրքող, որ լինի սրտի մակարդակից ցածր:
5. Տեղադրել տուժածին հով տեղ
6. Տալ շատ հեղուկ (ոչ ալկոհոլային)
7. Արագ հասցնել հիվանդանոց

**Չի կարելի` Գնել ձիգ կապեր, կամ ժգուտ**

**Չի կարելի` Կտրվածքներ կատարել**

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Գարսևյի Բ.Ս.* 1957. Հայաստանի Թունավոր Օձերը, Երևան,
2. *Աթաճյի Ա.Է.* 1996. Օձի ա շի աե Աձի աի եե ե Ի ձեե-աաի ռեի աի ձաեի Ի ա. // *ԱձՕի ձաՕ.* եաի ա. *աեռն.*, *Աձաաի*, 34 ռձձ.
3. *Աթաճյի Ա.Է., Էեի ձեի Օ.Է., Աի ձեի Ն.Ա., Նաձեեճյի Ա.Ն., Նաձեեճյի Ա.Ա., Նոեձաի յի Ժ.Լ., Աաձեճյի Շ.Ա., Օա-աձեի Օ.Ն.* 2000. Էճի եեձի աաի Ի ա ե եի աեի ձեի աաի Ի ա ռ աի ձի Ի աի ե աեճյի եա յաի ա *Vipera raddei* ե *Naja oxiana* ռա Ի աեի Ի ձի աեձեաի ռձձ Ի աեձի Ի ա ռի եի Ի աի Ի ձաա ա Ի ձի ա ե Ի աձի եի աե. // *Օձ.* աի եե. *Ձաճի.* Ի աձի Ի ա. եի Ի Օ. Ի ձ շի Ի եի աե, *Աձաաի*, ռ. 9-10.
4. *Արաի աաա Ի.Ա., Արձեի Է.Բ., Աաձաաեե Է.Ն., Ի ձեի ա Ի.Է.* 1998. Կի օեեի Ի աեճյ Ի ձեձի աւ Ժի ռեե, Շաի Ի աի աի աա ե Ի ձաճի աեարաեաճյ, Ի ., *ABF*, 574 ռձձ.
5. *Աեաի աձի ա Ա.Լ.* 1978. Շաի Ի աի աի աա ե Ի ձաճի աեարաեաճյ *Աձաաեաաի ա.* *Աաեո, ԿԷԼ*, 264 ռ.
6. *Արաի եեի ա, Ա.Ա., Աաձաաեե Է.Ն., Ժոճձաի Ի ա Ա.Է.* 1971. Շաի Ի աի աի աա ե Ի ձաճի աեարաեաճյ *ՆՆՆՆ*, Ի ., Ի աեւ, 303 ռձձ.
7. *Արաի եեի ա Ա.Ա., Աաձաաեե Է.Ն., Էւաի եի Ա.Ա., Ժոճձաի Ի ա Ա.Է., Աաձաա Ի. Ի.* 1977. Ի ձաաեեձաեւ շաի Ի աի աի աա ե Ի ձաճի աեարաեաճյ Օաձի ա *ՆՆՆՆ*. Ի ., Ի ձի ռաաւաի եա, 414 ռձձ.
8. *Աաձաաեե Է.Ն.* 1957. Օաձի ա Ի ձաճի աեարաեաճյ *Աձի աի եե ե աա շի Ի աաի աձաՕե-աճեե աի աեճ.* // *ԱձՕի ձաՕ աձաՕ* աեռն. եաի ա. *աեի ե. Ի աոե.*, *Աձաաի*, 25 ռձձ.
9. *Էոձյաձաա Ն.Ա. ե աձ.* 1991. Օձձաձեձի ե աաի Ի աեձաձաե. Որ ձաաի Ի ա Ի ձի ռի աեա. // Ի ., *Էաճ.* Ի ձի Ի ., 345 ռձձ.
10. *Ի ձեի ա Ա.Ի., Աեաձաեե Ա.Ա.* 1985. Շի Ի ձի եեի Ի եի աեճ, *Բաի աեձաա աեաի ձի աա ե եո յաւ, Ի ., Աւճաճյ օեի եա, 280 ռձձ.*
11. *Beebe T. & Griffiths R.* 2000. Amphibians and Reptiles, A Natural History of the British Herpetofauna, Harper Collins Publishers LTD, England, 270 p.
12. *Efrati, P. and Reif L.* 1955. Clinical and pathological observations on sixty-five cases of viper bite in Israel. // American Journal of Tropical Medicine and Hygiene, vol. 2 p.1085.
13. *Efrati P.* 1969. Clinical manifestations and treatment of viper bite in Israel. //Toxicon, vol.7, pp. 29-31.
14. *Jackson O.F.* 1980. Effects of a bite by a sand viper (*Vipera ammodytes*). // The Lancet, September 27, pp. 686-687.
15. *Latifi M.* 1985. The snakes of Iran, - Tehran, Iran, Department of Environment, 159 p.
16. *Meirte D.* (1992). Clns de determination des serpents d'Afrique. Tervuren, Belgique: Musne royal de l'Afrique centrale, 152 p.
17. *Reid H.A.*, 1976, Adder bites in Britain, British Medical Journal. 2, pp.153-156.
18. *Sket, D. Gubensek F., Adamic S., and Lebez D.* 1973. Action of a partially purified basic protein fraction from *Vipera ammodytes* venom. // Toxicon, vol. 11 pp. 47-53.
19. *Wallach V. & R Gunther* 1998. Visceral anatomy of the Malaysian, snake genus *Xenophidion*, including a cladistic analysis and allocation to a new family. // *Amphibia Reptilia*, 19 (4) pp. 385-404.
20. *Zaher, Hussam* (2000) Hemipenial morphology of the south American Xenodontine snakes, with a proposal for a monophyletic Xenodontinae and A reappraisal of colubroid hemipenes. *Bull. Amer. Mus. Nat. Hist.* No. 240 pp. 1-168.

